ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2023թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«__»_____ 2023թ.

ք. Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ը 2019 թվականից զբաղվում է մայրաքաղաքում թափառող շների գլխաքանակի կանոնակարգման համալիր ծրագրով: Իրականացվող ծրագրի շրջանակներում կատարվում է թափառող շների բռնում, նախնական զննում, հետազոտություն վտանգավոր վարակիչ հիվանդությունների ախտորոշիչ թեստերով, հիվանդ կենդանիների քնեցում և դիերի այրում, առողջ կենդանիների ստերջացում, պատվաստում կատաղություն հիվանդության դեմ, հաշվառում և համարակալում, ինչպես նաև մայրաքաղաքում անկած կենդանիների դիերի հավաքում և այրում: 2022 թվականից կազմակերպությունում գործարկվել է նաև ժամանակավոր կացարան, որտեղ կենդանիները պահվում են անհրաժեշտ բոլոր պայմաններով և հանձնվում խնամակալության: Մայրաքաղաքում թափառող շների խնդրի լուծման փուլային տարբերակի շրջանակներում, նախատեսվում է առաջիկայում ստեղծել կացարաններ/խնամքի կենտրոններ, որտեղ անհրաժեշտ բոլոր պայմաններով կապահովվեն արդեն ստերջացված և պատվաստված թափառող շները:

Ելնելով վերոգրյալից ներկայացված Նախագծով առաջարկվում է փոխել կազմակերպության անվանումը՝ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելով «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության: Նախագծով առաջարկվում է փոփոխել նաև Կազմակերպության կանոնադրությունը, Կազմակերպության գործունեության նպատակների մեջ ավելացնելով կացարանների ստեղծման և շահագործման գործառույթները, կանոնադրությամբ սահմանված նպատակների շրջանակներում կենդանիների և վերջիններիս խնամքի մոնիթորինգի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

««ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

««ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Կազմված է «28» մարտ 2023թ.

և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ ----

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Երևան քաղաքի ավագանու

« »_____2023թ.

N ____ Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ,

Երևանի քաղաքապետի պաշտոնակատար՝

_____ Լ. Հովհաննիսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«22» փետրվարի 2019թ.

Գրանցման համար՝ 278.215.1060023

ՀՎՀՀ՝ 00482795

22.02.2019 թ. գրանցված կանոնադրության

թիվ _____փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի կողմից

_____ ____ 20___թ.

աշխատակից՝ _____ _____

«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

Ե Ր Ե Վ Ա Ն 2023 թ.

1. «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնադրության տիտղոսաթերթի վրա «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» բառերը փոխարինել «Կենդանիների խնամքի կենտրոն» բառերով:

2) Կանոնադրության 1.1-ին կետում ««Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)» բառերը փոխարինել ««Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (նախկին անվանումը՝ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն), այսուհետ՝ (Կազմակերպություն)» բառերով:

3) Կանոնադրության 1.10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.10. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

կրճատ՝«ԿԽԿ» ՀՈԱԿ.

ռուսերեն լրիվ՝ «Центр по уходу за животными» общинная некоммерческая организация.

կրճատ՝ «ЦУЖ» ОНКО.

անգլերեն լրիվ՝ «Animal care center» community non commercial organization.

կրճատ՝«ACC» CNCO:»:

4) Կանոնադրության 2.3.9 ենթակետից հետո լրացնել նոր 2.3.10 և 2.3.11 ենթակետեր.

«2.3.10. ստեղծել Երևան քաղաքում թափառող կենդանիների խնամքի կենտրոններ (կացարաններ) և շահագործել դրանք:

2.3.11. սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների շրջանակներում իրականացնել կենդանիների և վերջիններիս խնամքի մոնիթորինգ:»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է 22.02.2019թ. պետական ռեգիստրում գրանցված «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: